ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ընդունելության թեստը բաղկացած է 3 մասից:

I մասը գնահատվում է 10 միավոր, ընդգրկված է հայերենի ուղղագրությանը և կետադրությանը վերաբերող 5 հարց, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:

II մասը գնահատվում է 30 միավոր: Տրված բնագրի հիման վրա անհրաժեշտ է կատարել 15 առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:

III մասում առաջարկվում է գրել շարադրություն՝ 3 թեմայից ընտրելով միայն մեկը: Առաջադրանքը գնահատվում է 10 միավոր: Շարադրել գրագետ, թույլ չտալ ուղղագրական, կետադրական, ոճական և շարադասական սխալներ:

Շարադրությունը գնահատվում է երկու բաղադրիչով.

ա) բովանդակություն՝ 5 միավոր (տրամաբանություն, ինքնուրույն մտածողություն, ստեղծագործական մոտեցում),

բ)շարադրանքի որակ՝5 միավոր (ուղղագրություն, կետադրություն, բառագործածություն, քերականություն):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:

ՄԱՍ I

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. ***Լրացնել բաց թողած տառերը.***

Վաղ__րոք, թա__ծադեմ, խ__կվել, երեսար__իչ, անհո__ի, պատն__շ, թ__թ__ալ, դեղ__անիկ, խոստ__արք, սերկ__իլ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. ***Վերականգնել տրված բառերի անհնչյունափոխ արմատները (օրինակ՝ լուսաբաց-լույս).***

*Երկրամաս*_____ *Մոխրագույն* _____

*Զուգերգ*_____ *Մարդասիրություն*_____

*Ծիսնելույզ*_____ *Մատենագետ*_____

*Խճաքար*_____ *Հորեղբայր* _____

*Վզկապ*_____ *Արմտիք*_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.

ի (կատարումն), դափ (դեղին), քար (քարի), ընդ (որում), հարավ (արևմտյան), հազար (հինգ), դեպքից (դեպք), Արփա (Սևան), կաս (կարմիր), հայ (վրացական).

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. ***Ընդգծել այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.***

Արտաշես Բ, Հայրենական Մեծ Պատերազմ, Դոնի Ռոստով, Կարմիր Ծով, Փոքր Ասիա, Աշոտ Ողորմած, Բյուրականի Աստղադիտարան, Հյուսիսային Սառուցյալ Օվկիանոս, Գագիկ Առաջին, Գրիգորիս Աղթամացի, Նոր Խարբերդ, Աղբյուր Սերոբ, Տորք Անգեղ, Նոր Նախիջևան.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. ***Կետադրել.***

Հորիզոնի վրա շողաց լուսաբացի կաթնագույն ժապավենը հետո բարձրացավ արևը իր ոսկեզօծ շողերով ողողելով կիրճի լանջերը: Հեռվում երևում էր մի սար փեշերը պատած խիտ թփուտներով իսկ կատարը անտառով: Թվում էր թե դա մի առասպելական հովիվ էր հսկայական փափախ դրած: Կածանից պոկվող քարերը դղրդյունով գլորվում էին ներքև տեղահան անում ուրիշ քարեր ու մեկը հազար էր դառնում: Օդը լցված էր երփներանգ ծաղիկների զգլխիչ բույրով թռչունների ճռվողյունով:

ՄԱՍ II

Կարդալ բնագիրը և կատարել 6-20 առաջադրանքները.

(1) Մնա՜ս բարով, անգի՛ն ծննդավայր: (2) Այսօր ավելի քան կես դար է՝ չեմ խմել սառնորակ ջուրդ, չեմ քաղել պտուղդ, և, ո՞վ գիտի, կտեսնե՞մ արդյոք քո փաղաքուշ կերպարանքը, որ այնքա՜ն պայծառ է իմ հոգնած հիշողության մեջ և այնքան խեղճ, որքան խեղճ է իմ մանկությունը:

(3) Կուչ գալով ֆուրգոնի մի խորշում՝ գինու երկու տակառների միջև, ես ճիգ արի զսպել արտասուքս անարդար պատժված մանկան պես: (4) Եվ զուր. շուտով իմ դառը հեծկլտանքը խառնվեց անիվների սուր դղրդյունի և կառապանի սուլոցների հետ: (5) Ա՜խ, զանգերի այդ վերջին ղողանջյունի, արեգակի այդ վերջին շողերի հետ կարծես իմ էությունից անջատվեց ինչ-որ թանկագին մի կտոր, ընկավ ապագայի մթության մեջ և մեռավ. չկա այլևս մարդու համար անապական երջանկություն այն օրից, երբ նա բաժանվում է ծնողների խանդակաթ սիրուց ու գուրգուրանքից:

(6) Ի՞նչ փույթ, որ այժմ ես ազատ եմ. իմ առջև իր ամբողջ դաժանությամբ կանգնած է անհայտ ու բիրտ ճակատագիրը: (7) Ի՞նչ ապագա է հյուսում արդյոք այս սֆինքսն ինձ համար, և այսուհետև ո՞վ պիտի պաշտպանի ինձ կյանքի խորդուբորդ ճանապարհներին:

(8) Արցունքներիս միջից մի անգամ ևս նայեցի հետ. սևաշղարշ մութն արդեն կլանել էր կիսավեր քաղաքն իր շրջակա բարձրաբերձ լեռներով ու խորախորհուրդ ձորերով: (9) Այս պահին առաջին անգամ մտածեցի իմ՝ թախծոտ օրերով ներծծված տասնյոթամյա փոքրիկ անցյալի մասին, և նա՝ որպես դառն իրականություն, պատկերացավ իմ առջև:

(10) Վեց տարեկան էի, երբ մի օր առանց ծնողներիս հարցնելու վազեցի մեր դրացի Սարգիս վարժապետի ուսումնարանը: (11) Այստեղ էին իմ հասակակիցներից ոմանք. ինքնըստինքյան հասկանալի է՝ չէի ուզում նրանցից հետ մնալ, թեև չգիտեի՝ ինչ տարբերություն կա փողոցի և դպրոցի միջև: (12) Սարգիսը մի հեզահամբույր ծերունի էր՝ պարթևահասակ, առույգ, ժպտուն:

(13) Ամեն անգամ՝ նրան տեսնելիս, մի տարօրինակ հաճույք էի զգում. ինձ թվում էր՝ նա մի առանձին սեր էր զգում դեպի մանուկները՝ չնայած զավակներ չունենալուն:

(14) -Ի՞նչ ես ուզում, զավա՛կս,- տարակուսելով հարցրեց Սարգիս վարժապետը՝ գլուխս փաղաքշաբար շոյելով:

(15) -Ուզում եմ գրել-կարդալ սովորել,- պատասխանեցի ես իմ ամաչկոտ բնույթի անսովոր համարձակությամբ:

(16)-Այսօրվանից դու իմ աշակերտն ես:

(17) Մայրս զարմացավ իմ հանդգնության վրա, բայց չընդդիմացավ: (18) Ավելին. նա մինչև անգամ պարծեցավ՝ իր որդին ուզում է մարդ դառնալ:

Ըստ Շիրվանզադեի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. *8-րդ նախադասությունից դուրս գրել 4 բարդ բառ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. *5-րդ նախադասությունից դուրս գրել վերջածանցավոր 4 գոյական.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. *7-րդ նախադասությունից դուրս գրել 4 դերանուն.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. *5-րդ նախադասությունից դուրս գրել 4 ածական.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. *Որոշել 8-րդ նախադասության կլանել էր բայի եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 11. 12-*րդ նախադասությունից դուրս գրել 2 բառ և գրել մեկական հոմանիշ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 12. *3-րդ նախադասությունից դուրս գրել Ու հոլովման պատկանող 2 բառ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 13. *4-րդ նախադասությունից դուրս գրել ենթական և ստորոգյալը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 14. *12-րդ նախադասությունից դուրս գրել հետադաս որոշչի 2 օրինակ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 15. *2-րդ նախադասությունից դուրս գրել ուղիղ խնդրի 2 օրինակ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 16. *9-րդ նախադասութունից դուրս գրել հեռացած /տրոհված/ հատկացուցիչը և հատկացյալը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 17. 6-*րդ նախադասությունից դուրս գրել ժամանակի պարագայի 1 օրինակ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 18. *2-րդ և 3-րդ նախադասություններից ո՞րն է պարզ, գրել նախադասությունը.*

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 19. *Կազմել 9-րդ նախադասության գծապատկերը (համարակալումը կատարել բնագրի նախադասության վրա).*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 20. *15-րդ նախադասության ուրիշի ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակի խոսքի.*

_____

_____

_____

ՄԱՍ III

Կատարել տրված 3 առաջադրանքից միայն մեկը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21. Գրել ազատ շարադրություն՝ ընտրելով տրված վերնագրերից միայն մեկը.*

ա/ Մանկության օրե՛ր, քաղցր ու երազական….

բ/ Գրել շարադրություն «Իմ ծննդավայրը»

գ/ Գրել ազատ շարադրություն՝ «Մեծ կյանքի շեմին եմ»

Նվազագույն ծավալը՝ 100 բառ